ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 27-Ա
2020թ.

04 սեպտեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ԱՐՎԵՍՏԻ, ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

Նախարար **Արայիկ Հարությունյան**

04.09.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի սեպտեմբերի 4-ի
N 27-Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ԱՐՎԵՍՏԻ, ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ
2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում (այսուհետ՝ Դպրոց) ուսումնական տարվա մեկնարկը, ինչպես նաև աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային արձակուրդները սահմանվում են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված ժամկետներին համապատասխան:
2. Ուսումնական տարվա տևողությունը 34-40 շաբաթ է, ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների:
3. Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և շենքային պայմաններից՝ կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ:
4. Առարկաների քանակը և դասաժամերի թվաքանակը ուսումնական պլանում կարող է ընդլայնվել՝ ելնելով Դպրոցի ֆինանսական հնարավորություններից:
5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևերն են անհատական և խմբային պարապունքները, անհատական դասի տևողությունը՝ 45, խմբայինը՝ 40 րոպե է:
6. Սովորողների գիտելիքների գնահատումը կատարվում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից ստուգարքով, տարբերակված ստուգարքով (սահմանային ներքին շեմով, բալային գնահատումով ստուգարք) և քննությամբ:
7. Տարբերակված ստուգարքն ու քննությունը գնահատվում են գնահատման առավելագույն 10 միավորային համակարգով, գնահատականը համարվում է բավարար՝ 3, 4, 5, լավ՝ 6, 7, 8 և գերազանց՝ 9, 10 միավորների դեպքում:
8. Ստուգարքի դեպքում արդյունքը գնահատվում է «ստուգված» կամ «չստուգված» գնահատականով:
9. Փոխադրական քննությունը, տարբերակված ստուգարքն անբավարար, կամ ստուգարքը «չստուգված» ստանալու դեպքում, կամ ուսումնական տարվա ընթացքում ընդհանուր 60-ից ավելի դասաժամ անհարգելի բացակայություն ունեցող սովորողը հաջորդ դասարան չի փոխադրվում:
10. Դրսեկության ձևով (էքստեռն) ուսումնառության ավարտը, ինչպես նաև դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ փոխադրումը կազմակերպվում է

ուսումնական պլանով նախատեսված ստուգարքների և քննությունների հանձնման, սովորողի գերազանց առաջադիմության և մանկավարժական խորհրդի հավանության դեպքում:

11. Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում Դպրոցի սովորողը դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

12. Դրսեկության ձևով (էքստեռն) Դպրոցում ընդունելության կազմակերպման գործընթացն իրականացվում է մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկը՝ Դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկած դասարանում, տվյալ դասարանին նախորդող փոխադրական ստուգարքների և քննությունների հաղթահարման դեպքում:

13. Դպրոցից Դպրոց սովորողի տեղափոխությունը կարող է իրականացվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսումնառության նախկին Դպրոցի տնօրենի հրամանով հաստատված համապատասխան տեղեկանքի հիման վրա:

14. Դպրոցի ավարտական վկայականը տրվում է ավարտական ստուգարքներն ու քննությունները հանձնած և ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի առնվազն 70% մասնակցություն ունեցած սովորողներին:

15. Դպրոցում վճարովի հիմունքներով կարող է կազմակերպվել նախադպրոցական և հետդպրոցական ուսումնառություն:

16. Ուսումնական պլանով չնախատեսված այլ (լրացուցիչ) երաժշտական գործիքի, երգեցողության ուսուցման գործընթացը կազմակերպվում է հավելյալ վարձավճարով:

17. Տեսական առարկաների խմբային պարապմունքների մեկ խմբում ընդգրկված սովորողների թվաքանակը կարող է լինել 6-12: Առանձին դեպքերում, փոքր համակազմ ունեցող Դպրոցում այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

18. «Նվագախումբ» առարկայի ուսուցումը կազմակերպվում է 10-12, իսկ «Երգչախումբ»-ը՝ 20-35 սովորողների դեպքում:

19. Ելնելով համույթի, նվագախմբի և երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել.

ա)3-12 սովորողի դեպքում՝ մեկ միավոր համույթի ղեկավարի համար.

բ) 8-12 սովորողի դեպքում՝ մեկ միավոր նվագախմբի ղեկավարի համար.

գ) 20-35 սովորողի դեպքում՝ մեկ միավոր երգչախմբի խմբավարի և 0,5-1 միավոր կոնցերտմայստերի համար: Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում համաչափ ավելացնել միավորների թիվը:

20. Արտակարգ դրության և արտակարգ իրավիճակի ռեժիմների գործողության ժամկետներում Դպրոցում ուսուցումը կարող է կազմակերպվել հեռավար ձևաչափով:

21. Օրինակելի ուսումնական պլանի յուրաքանչյուր բաժնի աղյուսակում ներկայացված են տվյալ մասնագիտության ուսուցման առարկաների ցանկը և նվազագույն դասաժամերը, որոնք պարտադիր են ավարտական ստուգարքներին և քննություններին մասնակցության համար: Աղյուսակներում ներկայացված է նաև ստուգարքների և քննությունների անցկացման ժամանակահատվածը («դասարան/ կիսամյակ» ձևաչափով):

22. Օրինակելի ուսումնական պլանի յուրաքանչյուր բաժնի «Պարզաբանումներ» հատվածում ներկայացված է տվյալ մասնագիտական առարկայի ուսուցման կազմակերպման գործընթացը:

Աղյուսակ 1

ԴԱՇՆԱՄՈՒՐ
(6-9 տարեկան ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/							Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII			
1.	Դաշնամուր	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, V/2, VI/2	IV/2, VII/2
2.	Սոլֆեջո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, IV/2, V/2, VI/2	VII/2
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV/1, V/1, VI/1, V II/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
4.	Երգչախումբ կամ համույթ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	I/2, II/2, III/2, IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	0.5	IV/2, VII/2		
	Ընդամենը	***4.5***	***5.0***	***5.5***	***7.0***	***8.0***	***8.0***	***8.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Դաշնամուր» և «ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «սոլֆեջո», «երաժշտական գրականություն» և «երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:

1. «Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, նվագակցություն, կոմպոզիցիա, իմպրովիզացիա, այլ երաժշտական գործիք:
2. «Երգչախումբ կամ համույթ» առարկայի դասաժամի 1-4-րդ դասարաններում տրամադրվում է «Երգչախումբ» առարկային, իսկ 5-7-րդ դասարաններում՝ «Երգչախումբ» և/կամ «Համույթ» /դաշնամուրային անսամբլ, տրիո, կվարտետ և այլն/ առարկաներին:
3. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

   1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

   2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

   3) կոնցերտմայստերական և իլյուստրատորական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0.5-ից մինչև 1.0 ժամ.

   ա) Դաշնամուրի կոնցերտների կատարման համար.

բ) Համույթների կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

Աղյուսակ 2

ԼԱՐԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ
(Ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս)
(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/							Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII			
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, V/2, VI/2	IV/2, VII/2
2.	Սոլֆեջո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, IV/2, V/2, VI/2	VII/2
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
4.	Երգչախումբ, նվագախումբ կամ համույթ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	I/2, II/2, III/2, IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	0.5	IV/2, VII/2		
	Ընդամենը	**4.5**	**5.0**	**5.5**	**7.0**	**8.0**	**8.0**	**8.0**			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. «Երաժշտական գործիք» և «ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «սոլֆեջո», «երաժշտական գրականություն» և «երգչախումբ, նվագախումբ, համույթ» առարկաներինը՝ խմբային:
2. Ալտի դասարանում ուսումը նպատակահարմար է սկսել V կամ VI դասարանից (մինչ այդ սովորողը ուսումնառում է ջութակի դասարանում): Կոնտրաբասի դասարանում ուսումը նպատակահարմար է սկսել V կամ VI դասարաններից (մինչ այդ սովորողը ուսումնառում է թավջութակի դասարանում):
3. «Ընտրովի» առարկաներն են՝ դաշնամուր, թերթից ընթերցում, կոմպոզիցիա, այլ երաժշտական գործիք:
4. «Ընտրովի» առարկայի դասաժամը 2-4-րդ դասարաններում տրամադրվում է դաշնամուրի ուսուցմանը, իսկ 5-7-րդ դասարաններում՝ դաշնամուրի և/կամ կոմպոզիցիայի և/կամ թերթից ընթերցման և/կամ այլ երաժշտական գործիքի ուսուցմանը:
5. «Երգչախումբ, նվագախումբ կամ համույթ» առարկայի դասաժամը 1-ին և 2-րդ դասարաններում տրամադրվում է «Երգչախումբ» առարկային, իսկ 3-7-րդ

դասարաններում՝ «Երգչախումբ» և/կամ «Համույթ» և/կամ «Նվագախումբ» առարկաներին:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0.5-ից մինչև 1.0 ժամ՝

ա) «Երաժշտական գործիք» առարկայի համար.

բ) Համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

Աղյուսակ 3

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
(Դասական, ժողովրդական, էստրադային)
(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակը /շաբաթական/							Ստու Գարք	Տարբերա կված ստուգարք	Քննու թյուն
		Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII			
.	Մեներգեցողություն	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, V/2, VI/2	IV/2, VII/2
.	Սոլֆեջո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, IV/2, V/2, VI/2	VII/2
.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
.	Երգչախումբ կամ համույթ	---	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	II/2, III/2, IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
.	Դաշնամուր	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	0.5	IV/2, VII/2		
	Ընդամենը	***4.0***	***5.0***	***5.0***	***6.5***	***7.5***	***8.0***	***8.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. «Մեներգեցողություն» և «դաշնամուր» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «սոլֆեջո», «երաժշտական գրականություն» և «երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:
2. «Մեներգեցողություն» առարկայի 1 դասաժամը սահմանել 40 րոպե:
3. «Երգչախումբ կամ համույթ» առարկայի դասաժամը 2-րդ և 3-րդ դասարաններում տրամադրվում է «Երգչախումբ» առարկային, իսկ 4-7-րդ դասարաններում՝ «Երգչախումբ» և/կամ «Համույթ» առարկաներին:
4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0.5-ից մինչև 1.0 ժամ՝

ա) «մեներգեցողություն» առարկայի համար.

բ) Երգչախմբերի կամ համույթների խմբային և միացյալ պարապմունքների համար:

Աղյուսակ 4

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
(Դասական, ժողովրդական, էստրադային)
(9-12 տարեկանը ներառյալ ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/					Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ							
		I	II	III	IV	V			
1.	Մեներգեցողություն	1.5	1.5	1.5	2.0	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1	II/2, IV/2,	III/2, V/2
2.	Սոլֆեջո	1.5	1.5	1.5	1.5	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1	II/2, III/2, IV/2	V/2
3.	Երաժշտական գրականություն	---	1.5	1.5	1.5	1.5	II/1, III/1, IV/1, V/1	II/2, III/2, IV/2, V/2	
4.	Երգչախումբ կամ համույթ	---	1.0	2.0	2.0	2.0	II/2, III/1, IV/1, V/1	III/2, IV/2, V/2	
5.	Դաշնամուր	1.0	1.0	1.0	1.0	0.5	III/2, V/2		
	Ընդամենը	***4.0***	***6.5***	***7.5***	***8.0***	***8.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. «Մեներգեցողություն» և «դաշնամուր» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «սոլֆեջո», «երաժշտական գրականություն» և «երգչախումբ կամ համույթ» առարկայինը՝ խմբային:
2. «Մեներգեցողություն» առարկայի 1 դասաժամը սահմանել 40 րոպե:
3. «Երգչախումբ կամ համույթ» առարկայի դասաժամը 2-րդ դասարանում տրամադրվում է «Երգչախումբ» առարկային, իսկ 3-րդ, 4-րդ և 5-րդ դասարաններում՝ «Երգչախումբ» և/կամ «Համույթ» առարկաներին:
4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0.5-ից մինչև 1.0 ժամ՝

ա) «մեներգեցողություն» առարկայի համար.

բ)/ Երգչախմբերի կամ համույթների խմբային և միացյալ պարապմունքների համար:

Աղյուսակ 5

ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՌ

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/							Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII			
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, V/2, VI/2	IV/2, VII/2
2.	Սոլֆեջո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, IV/2, V/2, VI/2	VII/2
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
4.	Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	I/2, II/2, III/2, IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	0.5	IV/2, VII/2		
	Ընդամենը	***4.0***	***4.5***	***5.5***	***7.0***	***8.0***	***8.0***	***8.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. «Երաժշտական գործիք» և «ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «սոլֆեջո», «երաժշտական գրականություն» և «նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը՝ խմբային: Դհոլ երաժշտական գործիքի՝ 1-ին կետով սահմանված մասնագիտական դասաժամերը բաշխվում են 1 ժամ անհատական և 1 ժամ խմբային ուսուցման սկզբունքով: Մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանել 3-6 սովորող:
2. «Ընտրովի» առարկաներն են՝ դաշնամուր, թերթից ընթերցում, կոմպոզիցիա, այլ երաժշտական գործիք:
3. «Ընտրովի» առարկայի դասաժամը 2-4-րդ դասարաններում տրամադրվում է դաշնամուրի ուսուցմանը, իսկ 5-7-րդ դասարաններում, դաշնամուրի և/կամ կոմպոզիցիայի և/կամ թերթից ընթերցման և/կամ այլ երաժշտական գործիքի ուսուցմանը:
4. «Նվագախումբ, երգչախումբ կամ համույթ» առարկայի դասաժամը 1-ին և 2-րդ դասարաններում տրամադրվում է «Երգչախումբ» առարկային, իսկ 3-7-րդ դասարաններում՝ «Երգչախումբ» և/կամ «Համույթ» և/կամ «Նվագախումբ» առարկաներին:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0.5-ից մինչև 1.0 ժամ՝

ա) «երաժշտական գործիք» առարկայի համար.

բ) համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

Աղյուսակ 6

ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՌ

(9-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/ Դասարաններ					Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		I	II	III	IV	V			
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1	II/2, IV/2,	III/2, V/2
2.	Սոլֆեջո	1.5	1.5	1.5	1.5	2.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1	II/2, III/2, IV/2	V/2
3.	Երաժշտական գրականություն	---	1.5	1.5	1.5	1.5	II/1, III/1, IV/1, V/1	II/2, III/2, IV/2, V/2	
4.	Նվագախումբ, երգչախումբ կամ համույթ	1.0	1.0	2.0	2.0	2.0	I/2, II/2, III/1, IV/1, V/1	III/2, IV/2, V/2	
5.	Ընտրովի	---	1.0	1.0	1.0	0.5	III/2, V/2		
	Ընդամենը	***4.5***	***7.0***	***8.0***	***8.0***	***8.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. «Երաժշտական գործիք» և «ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «սոլֆեջո», «երաժշտական գրականություն» և «նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը՝ խմբային: Դհոլ երաժշտական գործիքի՝ 1-ին կետով սահմանված մասնագիտական դասաժամերը բաշխվում են 1 ժամ անհատական և 1 ժամ խմբային ուսուցման սկզբունքով: Մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանել 3-6 սովորող:
2. «Ընտրովի» առարկաներն են՝ դաշնամուր, թերթից ընթերցում, կոմպոզիցիա, այլ երաժշտական գործիք:
3. «Ընտրովի» առարկայի դասաժամը 2-3-րդ դասարաններում տրամադրվում է դաշնամուրի ուսուցմանը, իսկ 4-5-րդ դասարաններում՝ դաշնամուրի և/կամ կոմպոզիցիայի և/կամ թերթից ընթերցման և/կամ այլ երաժշտական գործիքի ուսուցմանը:
4. «Նվագախումբ, երգչախումբ կամ համույթ» առարկայի դասաժամը 1-ին և 2-րդ դասարաններում տրամադրվում է «Երգչախումբ» առարկային, իսկ 3-5-րդ դասարաններում՝ «Երգչախումբ» և/կամ «Համույթ» և/կամ «Նվագախումբ» առարկաներին:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0.5-ից մինչև 1.0 ժամ՝

ա)«երաժշտական գործիք» առարկայի համար.

բ) համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

Աղյուսակ 7

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
(6-10 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/							Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII			
1	Կերպարվեստի հիմունքներ և նկարչություն	2.0	2.0	2.0	-	-	-	-	I/2, II/2, III/1	III/2	
2.	Կիրառական արվեստ	2.0	2.0	2.0	-	-	-	-	1/2, II/2, III/1	III/2	
3.	Ծեփագործություն	2.0	2.0	2.0	-	-	-	-	1/2, II/2, III/1	III/2	
4.	Գծանկար	---	---	---	3.0	3.0	4.0	4.0	IV/1, V/1, VI/1	IV/2, V/2, VI/2	VII/2
5.	Գունանկար	---	---	---	3.0	3.0	3.0	3.0	IV/1, V/1, VI/1	IV/2, V/2, VI/2	VII/2
6.	Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/ կիրառական	---	---	---	2/1	2/1	2/1	2/1	IV/1, V/1, VI/1	IV/2, V/2, VI/2	VII/2
7.	Քանդակ կամ կիրառական արվեստ	---	---	---	2.0	2.0	1.0	1.0	IV/1, V/1, VI/1	IV/2, V/2, VI/2	VII/2
8.	Արվեստի պատմություն	---	---	--	1.0	1.0	1.0	1.0	IV/1, V/1, VI/1	IV/2, V/2, VI/2, VII/2	----
9.	Ընտրովի	0.5	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV/2, VII/2		--
Ընդամենը		***6.5***	***6.5***	***7.0***	***13.0***	***13.0***	***13.0***	***13.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Դպրոցի հայեցողությամբ «կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:
2. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: «Ընտրովի» առարկայի դասաժամի 0.25-ը III-VI դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորդից» առարկային:
3. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) ժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ժամեր բնորդի վարձատրության համար՝ ոչ ավելի քան յուրաքանչյուր առարկային տրամադրվող ժամաքանակի 30%-ը.

3) մանկավարժական աշխատանքի լրացուցիչ 28-ական ժամ յուրաքանչյուր կիսամյակ՝ պլեներային դասերն ըստ խմբերի անցկացման համար:

Աղյուսակ 8

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
(10-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/				Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV			
1.	Գծանկար	3.0	3.0	4.0	4.0	II/1, III/1	II/2, III/2	IV/2
2.	Գունանկար	3.0	3.0	3.0	3.0	II/1, III/1	II/2, III/2	IV/2
3.	Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/կիրառական	2/1	2/1	2/1	2/1	II/1, III/1	II/2, III/2	IV/2
4.	Քանդակ կամ դեկորատիվ-կիրառական արվեստ	2.0	2.0	1.0	1.0	II/1, III/1	II/2, III/2	IV/2
5.	Արվեստի պատմություն	1.0	1.0	1.0	1.0	IV/1	IV/2	
6.	Ընտրովի	1.0	1.0	1.0	1.0	II/2, IV/2		
	Ընդամենը	***13.0***	***13.0***	***13.0***	***13.0***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Դպրոցի հայեցողությամբ «կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:
2. «Ընտրովի» առարկաներնեն՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Ընտրովի առարկայի դասաժամի 0.25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորդից» առարկային:
3. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) ժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ժամեր բնորդի վարձատրության համար՝ ոչ ավելի, քան յուրաքանչյուր առարկային տրամադրվող ժամաքանակի 30%-ը.

3) մանկավարժական աշխատանքի լրացուցիչ 28-ական ժամ յուրաքանչյուր կիսամյակ՝ պլեներային դասերն ըստ խմբերի անցկացման համար:

Աղյուսակ 9

ՊԱՐԱՐՎԵՍՏ
(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/							Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ									
		I	II	III	IV	V	VI	VII			
1.	Դասական պար	-	--	4.5	4.5	4.5	4.5	4.5	III/1, IV/1, V/1, VI/1	III/2, IV/2, V/2, VI/2	VII/2
2.	Հայկական պար		---	3.0	3.0	3.0	3.0	3.0	III/1, IV/1, V/1, VI/1	III/2, IV/2, V/2, VI/2	VII/2
3.	Ժամանակակից պարահանդեսային պար	---	---	---	---	1.5	1.5	1.5	V/1, VI/1	V/2, VI/2	VII/2
4.	Պատմակենցաղային պար	---	---	1.5	1.5				III/1, IV/1	III/2, IV/2	
5.	Ժողովուրդներին բնորոշ բեմական պար	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV/1, V/1, VI/1	IV/2, V/2, VI/2	VII/2
6.	Ռիթմիկա և պար	4.0	4.0	---	---	---	---	---	II/2		
7.	Մարմնամարզություն	1.0	1.0	---	---	---	---	---	II/2		
8.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	1.0	1.0	1.0	0.5	0.5	0.5	0.5	VII/2		
9.	Արվեստի պատմություն	---	---	--	1.0	1.0	1.0	1.0	IV/1, V/1, VI/1, VII/1	IV/2, V/2, VI/2, VII/2	
10.	Բեմական փորձառություն /պրակտիկա/	---	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5			
	Ընդամենը	***6.0***	***6.5***	***10.5***	***12.5***	***12.5***	***12.5***	***12.5***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Բոլոր առարկաները ուսուցանվում են խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ 10-րդ կետի՝ «բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է Դպրոցի տնօրինությանը:

2. «Դասական պար», «հայկական պար», «ժամանակակից պարահանդեսային պար», «պատմակենցաղային պար», «ժողովուրդներին բնորոշ բեմական պար» առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է առնվազն 8-12, իսկ «ռիթմիկա և պար», «մարմնամարզություն /պարտեր/» «երաժշտության գրագիտություն և ունկնդրում» և «արվեստի պատմություն» առարկաների խմբերում առնվազն 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված՝ տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է՝ սկսած 4-ից):

3. Ուսումնական պլանի դասաժամերից բացի՝ անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ժամեր նախատեսել նախաելոյթային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար:

4. Ուսումնական պլանի կատարման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նվագակցության ժամեր.

1) 1-6-րդ կետերի առարկաների՝ խմբակային և «Բեմական փորձառություն» առարկայի անհատական պարապմունքների շաբաթական դասաժամերին համահավասար.

2) նախաելոյթային միացյալ պարապմունքների համար:

5. 7-ամյա կրթության դեպքում՝ V, VI, VII դասարաններում խմբի համալրման դեպքում «հայկական պար» և «ժամանակակից պարահանդեսային պար» առարկաների շաբաթական դասաժամերի գումարային քանակը՝ 4.5 ժամ, դպրոցի մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է տրամադրվել այդ առարկաներից որևէ մեկի ուսուցմանը՝ ըստ սովորողների նախասիրության (համապատասխանաբար մյուսը բացառելով ուսումնական պլանից):

6. Դպրոցի ֆինանսական հնարավորություններից ելնելով և հիմնադրի կողմից հաստատված ուսման վարձի լրավճարով կարող է պլանավորվել յուրաքանչյուր սովորողի համար շաբաթական 0.5-1.5 ժամ «ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկայի ցանկը՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն, ստեպ, դերասանի վարպետություն և այլն:

Աղյուսակ 10

ՊԱՐԱՐՎԵՍՏ
(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/					Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		Դասարաններ							
		I	II	III	IV	V			
1.	Դասական պար	3.0	4.5	4.5	4.5	4.5	I/2, II/1, III/1, IV/1,V/1	II/2, III/2, IV/2	V/2
2.	Հայկական պար		3.0	3.0	3.0	3.0	II/2, III/1, IV/1,V/1	III/2, IV/2	V/2
3.	Ժամանակակից պարահանդեսային պար			1.5	1.5	1.5	III/1, IV/1, V/1	III/2, IV/2	V/2
4.	Պատմակենցաղային պար		1.5				II/1	II/2	
5.	Ժողովուրդներին բնորոշ բեմական պար			1.5	1.5	1.5	III/1, IV/1,V/1	III/2, IV/2	V/2
6.	Ռիթմիկա	1.0	1.0				II/2		
7.	Մարմնամարզություն /պարտեր/	1.0							
8.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	1.0	0.5	0.5	0.5	0.5	V/2		
9.	Արվեստի պատմություն	---	1.0	1.0	1.0	1.0	II/1, III/1, IV/, V/1	II/2, III/2, IV/2, V/2	
10.	Բեմական փորձառություն /պրակտիկա/	0.5	0.5	0.5	0.5	0.5	--		
	Ընդամենը	***6.5***	***12.0***	***12.5***	***12.5***	***12.5***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Բոլոր առարկաները ուսուցանվում են խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ 10-րդ կետի՝ «բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է Դպրոցի տնօրինությանը:

2. «Դասական պար», «հայկական պար», «ժամանակակից պարահանդեսային պար», «պատմակենցաղային պար», «ժողովուրդներին բնորոշ բեմական պար» առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է առնվազն 8-12, իսկ «ռիթմիկա և պար», «մարմնամարզություն /պարտեր/» «երաժշտության գրագիտություն և ունկնդրում» և «արվեստի պատմություն» առարկաների խմբերում առնվազն 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված՝ տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է՝ սկսած 4-ից):

3.Ուսումնական պլանի դասաժամերից բացի՝ անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ժամեր նախատեսել նախաելոյթային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար:

4.Ուսումնական պլանի կատարման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նվագակցության ժամեր.

1) 1-6-րդ կետերի առարկաների՝ խմբային և «բեմական փորձառություն» առարկայի անհատական պարապմունքների շաբաթական դասաժամերին հավասար.

2) նախաելոյթային միացյալ պարապմունքների համար:

5. 5-ամյա կրթության դեպքում՝ III, IV, V դասարաներում խմբի համալրման դեպքում «հայկական պար» և «ժամանակակից պարահանդեսային պար» առարկաների շաբաթական դասաժամերի գումարային քանակը՝ 4.5 ժամ, դպրոցի մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է տրամադրվել այդ առարկաներից որևէ մեկի ուսուցմանը՝ ըստ սովորողների նախասիրության (համապատասխանաբար մյուսը բացառելով ուսումնական պլանից):

6. Դպրոցի ֆինանսական հնարավորությունից ելնելով և հիմնադրի կողմից հաստատված ուսման վարձի լրավճարով կարող է պլանավորվել յուրաքանչյուր աշակերտին շաբաթական 0.5-1.5 ժամ «ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն, ստեպ, դերասանի վարպետություն և այլն:

Աղյուսակ 11

ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏ
(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/ Դասարաններ							Ստուգարք	Տարբերակված ստուգարք	Քննություն
		I	II	III	IV	V	VI	VII			
1.	Դերասանի վարպետություն	2.0	2.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1, VI/1, VII/1	II/2, III/2, V/2, VI/2	IV/2, VII/2
2.	Բեմական խոսք	1.0	1.0	1.0	0.5	0.5	0.5	0.5	I/2,II/1, III/1,IV/1 V/1, VI/1, VII/1	II/2, III/2, V/2, VI/2	IV/2, VII/2
3.	Բեմական շարժում	---	---	---	1.0	1.0	1.0	1.0			
4.	Արվեստի պատմություն	---	---	--	1.0	1.0	1.0	1.0	IV/2, V/1,VI/1 VII/1	V/2,VI/2, VII/2	
5.	Պար	--	---	1.0	1.0	1.0	1.0	1.0	III/2, IV/1, V/1, V/2, VI/1, VI/2, VII/1	IV/2, VII/2	
6.	Ռիթմիկա	1.0	1.0	--	--	--	--	--	---		
7.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	---	---	0.5	0.5	0.5	0.5	0.5	VII/1	VII/2	
8.	Բեմական փորձառություն /պրակտիկա/	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5			
9.	Ընտրովի	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV/2, VII/2		
Ընդամենը		***5.0***	***5.5***	***6.0***	***7.5***	***7.5***	***8.5***	***8.5***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Բոլոր առարկաները ուսուցանվում են խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ 8-րդ կետի՝ «բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է Դպրոցի տնօրինությանը:
2. «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, երգեցողություն, գեղարվեստական խոսք, տիկնիկային թատրոն, պար և այլն:
3. Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է առնվազն 6-12 աշակերտ «Բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև 5 սովորող:

4. «Բեմական փորձառություն /պրակտիկա/» առարկայով նախատեսված մանկավարժական աշխատանքի ժամերը պլանավորվում են մեկ սովորողի համար շաբաթական 0.5 դասաժամի չափով: Դպրոցի տնօրինությանը տրվում է այդ դասաժամերի ընդհանուր քանակը բաշխելու իրավունքը:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) նվագակցողի հաստիք ընտրովի առարկաների /բացի դաշնամուր, ակորդեոն, տավիղ, կիթառ գործիքների/ համար:

Աղյուսակ 12

ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏ
(9-12 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանումը	Դասաժամերի քանակը /շաբաթական/ Դասարաններ					Ստու գարք	Տարբերակ ված ստուգարք	Քննություն
		I	II	III	IV	V			
1.	Դերասանի վարպետություն	2.0	2.0	2.0	3.0	3.0	I/2, II/1, III/1, IV/1, V/1	II/2, III/2, IV/2	V/2
2.	Բեմական խոսք	1.0	1.0	1.0	0.5	0.5	I/2, II/1, III/1, IV/1, V/1	II/2, III/2, IV/2	V/2
3.	Բեմական շարժում		1.0	1.0	1.0	1.0			
4.	Արվեստի պատմություն		1.0	1.0	1.0	1.0	II/1, III/1, IV/1, IV/2, V/1	III/2, V/2	
5.	Պար		1.0	1.0	1.0	1.0	II/2, III/2, IV/1, IV/2, V/1	III/2, V/2	
6.	Ռիթմիկա	1.0	---	---	---		---		
7.	Երաժշտական գրականություն և ունկնդրում	1.0	0.5	0.5	0.5	0.5	V/1	V/2	
8.	Բեմական փորձառություն /պրակտիկա/	0.5	0.5	0.5	0.5	0.5			
9	Ընտրովի	1.0	1.0	1.0	1.0	1.0	III/2, V/2		
	Ընդամենը	***6.5***	***8.0***	***8.0***	***8.5***	***8.5***			

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Բոլոր առարկաները ուսուցանվում են խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ 8-րդ կետի՝ «բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է Դպրոցի տնօրինությանը:

2. «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, երգեցողություն, գեղարվեստական խոսք, տիկնիկային թատրոն, պար և այլն:

3. Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է առնվազն 6-12 սովորող, «բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև 5 սովորող:

4. «Բեմական փորձառություն /պրակտիկա/» առարկայով նախատեսված մանկավարժական աշխատանքի ժամերը պլանավորվում են մեկ սովորողի համար շաբաթական 0.5 դասաժամի չափով: Դպրոցի տնօրինությանը տրվում է այդ դասաժամերի ընդհանուր քանակը բաշխելու իրավունքը:

5.Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) Նվագակցողի հաստիք ընտրովի առարկաների /բացի դաշնամուր, ակորդեոն, տավիղ, կիթառ գործիքների/ համար: